ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-22-7/39-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 13 .12.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Գդակ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Երանոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 02.11.2022թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-22-7/39-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. *Համաձայնագրի գինը և վճարման կարգը*

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **13806000 / տասներեք միլիոն ութ հարյուր վեց/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ**: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ.:

3. *Այլ պայմաններ*

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՆՏՍ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանումը ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը :

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Գդակ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀք.Երևան, Սարի Թաղ 1-2, 8 տ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | ՀՀ 220300125691000 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00432114 |
| ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Ս.ԵՐԱՆՈՍՅԱՆ |

Հավելված N 1

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակ | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը |
|---|---|---|---|---|---|---|
| 9. | Թևքանշան գրասենյակային | հատ | 13000 | 396 | 5148000 | 2022թ 4-րդ եռամսյակ, ոչ ուշ քան 20.12.2022թ |
| 10. | Թևքանշան գրասենյակային /զորատեսակի/ | հատ | 13000 | 396 | 5148000 | |
| 12. | Կրծքանշան արյան կարգի /գրասենյակային/ | հատ | 13000 | 270 | 3510000 | |

Հավելված N 2

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ., ընդ որում |
|---|---|---|---|
| | | | 4-րդ եռամսյակ |
| 9. | Թևքանշան գրասենյակային | 35811240/520 | 5148000 |
| 10. | Թևքանշան գրասենյակային /զորատեսակի/ | 35811240/521 | 5148000 |
| 12. | Կրծքանշան արյան կարգի /գրասենյակային/ | 39561133/513 | 3510000 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Ա.ԵՐԻՑՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

Գդակ ՍՊԸ տնօրեն

Ս.ԵՐԱՆՈՍՅԱՆ